ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

---------- N ----------

Հայաստանի Հանրապետության գնումների
հետ կապված բողոքներ քննող անձ
պարոն Միհեր ԱՆԱՆՅԱՆԻՆ

Ձեր 2018 թվականի հուլիսի 6-ի
N ԳԲԽ-ՄԱ/1/12296-18 գրություն

Հարգելի պարոն Անանյան

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդի 2017 թվականի ապրիլի 21-ի <<Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդի գործունեության կարգը հաստատելու մասին>> թիվ 1 որոշման 52-րդ կետի՝ կից ներկայացնում եմ ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3 ծածկագրով ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար համայնքի տարածքում <<Եռասերունդ երկրապահ>> ուսումնամարզական համալիրի կառուցման նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 2018 թվականի հուլիսի 12-ի N 4 արձանագրության պատճենը:

Առդիր՝ 2 թերթ:

Հարգանքով՝

Արամ ՄԿՐՏՉՅԱՆ

02/16.4/3372-18
2018-07-17

ՀՀ ԿԱ ՔՊԿ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական
և հաշվապահական հաշվառման վարչություն. Աշոտ Բաբայան
Հեռ: 011621727

Արձանագրություն N 4

ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3 ծածկագրով ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար համայնքի տարածքում <<Եռասերունդ երկրապահ>> ուսումնամարզական համալիրի կառուցման նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

12 հուլիսի 2018թ.
ժամը 12:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Քոչարյան
Հանձնաժողովի անդամներ՝	Ն. Մանուկյան / բացող /
	Ռ. Ադամյան / բացող /
	Վ. Առաքելյան /գնահատող/
	Գ. Գևորգյան /գնահատող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Ն. Հարությունյան

1. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/71 որոշումը՝ <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ-ի կողմից ներկայացրած բողոքի վերաբերյալ

(Ա. Քոչարյան)

1.1 ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտի կողմից կազմակերպված ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից 2018 թ. հունիսի 20-ին ներկայացրած բողոքի հիման վրա ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանը, 2018թ. հուլիսի 6-ին կայացրել է թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/71 որոշումը (այսուհետ՝ Որոշում), որի արդյունքում մասնակի բավարարվել է Ընկերության բողոքը, մասնավորապես՝

- պարտավորեցնել ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3 ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3 ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը,
- պարտավորեցնել ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3 ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել Ընկերության հայտը մերժելու մասին որոշումը,
- պարտավորեցնել ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3 ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ Ընկերության կողմից ներկայացրած <<SPAP II C-3.1.1.d>> պայմանագիրը գնահատել հրավերի պահանջներին համապատասխանող:

1.2 Ընկերության, որպես հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած հայտը բավարար գնահատելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու պահանջի մասով բողոքը մերժվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Գնահատող հանձնաժողովի կողմից 2018 թ. հունիսի 12-ի N 3 արձանագրությամբ ընդունած որոշումները վերանայելու մասին

(Ա. Քոչարյան)

2.1 Քանի որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կայացրած Որոշումը իրավապարտադիր է, գնահատող հանձնաժողովը որոշում է.

- ուժը կորցրած ճանաչել գնահատող հանձնաժողովի 2018 թ. հունիսի 12-ի N 3 արձանագրության 7-րդ կետի 7.2 ենթակետով ընդունած որոշումները.
- Ընկերության կողմից ներկայացրած <<SPAP II C-3.1.1.d>> պայմանագիրը գնահատել հրավերի պահանջներին համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

3. Հայտերի գնահատման արդյունքների հաստատման և պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Քոչարյան)

3.1 Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացրած գնահատման թերթիկները՝ Ընկերության հայտը գնահատել բավարար, ճանաչել ընտրված մասնակից և վերջինիս ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Քոչարյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գնումների կազմակերպման բաժնում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Քոչարյան

Անդամ՝ _____ Ն. Մանուկյան

_____ Ռ. Ադամյան

_____ Վ. Առաքելյան

_____ Գ. Գևորգյան

Արձանագրությունը կազմեց
Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ն. Հարությունյան